Ճյուղի

Ուղեցույց

Ճյուղի

Ո ւ ղ ե ց ո ւ յ ց

Հրատարակված է
Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու կողմից
Սոլթ Լեյք Սիթի, Յուտա

©1993, 1999, 2001 by Intellectual Reserve, Inc.
Բոլոր իրավունքները պաշտպանված են
Printed in the United States of America

English approval: 3/01
Translation approval: 3/01
Branch Guidebook –ի թարգմանությունը
Armenian

Բովանդակություն

Ճյուղի նպատակը	1
Ճյուղի Նախագահությունը	3
Հարցազրույց	7
Կանչել անդամներին ծառայել Եկեղեցու պաշտոններում	9
Աջակցում և Ազատում	10
Անդամների ձեռնադրումը կոչումների	12
Ծեսեր և Օրհնություններ	13
Անդամի պարտականությունները	14
Ժողովներ	15
Ժողովներ անցկացնելու վայրերը	20
Նյութեր	21
Միջոցառումներ	22
Երաժշտություն	23
Գրառումներ և Հաշվետվություններ	24
Ֆինանսներ	25
Ղեկավարների վերապատրաստում	26
Եկեղեցու Նյութերի և Ընտանիքի Պատմության Վերաբերյալ Տեղեկության Ձեռքբերում	27

Բաշխում

Ճյուղի Ուղեցույցը նախատեսված է ճյուղի այն ղեկավարների համար, որոնք Եկեղեցում նոր են և սահմանափակ Եկեղեցու փորձ ունեն: Այն օգտակար է նաև այն տարածքների ղեկավարների համար, որտեղ Եկեղեցին ավելի վաղ է հիմնվել: Այն տալիս է ճյուղի գործունեության նպատակը, կազմակերպումը և կարգերը:

Ճյուղի Նպատակը

Իր երկրային ծառայության ժամանակ, Հիսուս Քրիստոսը, երկրի վրա հիմնեց Իր Եկեղեցին: Նրա մահից հետո, հավատացյալների խմբերը հանդիպում էին Նրան երգրպագելու, Նրա ուսմունքները սովորելու և կիրառելու, միմյանց ծառայելու, ոգեշնչելու և զորացնելու համար: Փրկիչը խոստացել է. «Ուր որ երկու կամ երեք հոգի իմ անունովը ժողովված լինին՝ ես այնտեղ նրանց մեջ եմ» (Մատթեոս ԺԸ.20):

Այսօր Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու անդամները միավորված են խմբերում: Փոքր խմբերը կոչվում են ճյուղեր և յուրաքանչյուր ճյուղում նախագահում է ճյուղի նախագահը: Տարածքային Նախագահության հաստատմամբ միսիայի նախագահը կարող է ճյուղ հիմնել, եթե այդ տարածքում ապրում են Եկեղեցուն միացած առնվազն երկու ընտանիք և անդամներից մեկը Մելքիսեդեկյան Քահանայություն կրող արժանի տղամարդ է, կամ Ահարոնյան Քահանայություն կրող արժանի քահանա: Արժանի է համարվում այն անձը, որը Տիրոջ հետ ուխտերի մեջ է մտել, օրինակ՝ մկրտության ուխտի, և ջանասիրաբար աշխատում է պահել այդ ուխտերը:

Միսիայի նախագահը վերահսկում է ճյուղը և ճյուղի նախագահը հաշվետու է նրան: Եթե միսիայի սահմաններում ճյուղերի բավարար քանակ իրենց աշխարհագրական դիրքով մոտ են գտնվում միմյանց, ապա միսիայի նախագահը Տարածքային Նախագահության հաստատմամբ կարող է այդ ճյուղերը միավորել, ստեղծելով շրջան: Երբ ճյուղը կազմակերպված շրջանի մեջ է մտնում, ճյուղի

նախագահը վերահսկվում է շրջանի նախագահի կողմից, որը, իր հերթին, հաշվետու է միսիայի նախագահին:

Եկեղեցին պատրաստել է այս ուղեցույցը՝ օգնելու ճյուղի ղեկավարներին սովորել իրենց կոչումների պարտականությունները և դրանց կատարման եղանակները: Բոլոր ղեկավարները և Եկեղեցու մյուս անդամները պետք է օգնեն իրականացնել Եկեղեցու առաքելությունը, որն է՝ հրավիրել բոլոր մարդկանց «գալ դեպի Քրիստոսը և կատարելագործվել նրանում» (Մորոնի 10.32): Այս առաքելությունը կատարելու համար, ղեկավարները պետք է անդամներին օգնեն.

- Քարոզել Հիսուս Քրիստոսի ավետարանը յուրաքանչյուր ազգի, ցեղի, լեզվի և ժողովրդի: Կիսվել ավետարանով, բերելով վկայություն Սուրբ Հոգու հուշումով: Միսիոներները պետք է շարունակեն աջակցել նորադարձներին, որոնք դեռևս գտնվում են Եկեղեցու անդամության անցումային փուլում:
- Կատարելագործել Սրբերին: Օգնել նորադարձներին զարգանալ Եկեղեցում, հետևելով, որպեսզի նրանք ունենան ընկեր և հանձնարարություն, և սնուցվեն Աստծո խոսքով: Օգնել նրանց ստանալ ծեսերը և կապել ավետարանային ուխտերը, աշխատել պահել պատվիրանները, ծառայել մերձավորներին, հոգ տանել աղքատների և կարիքավորների մասին և ընկերակցել միմիանց հետ, Սրբերի համայնքը կառուցելու նպատակով:
- Փրկագնել մահացածներին: Գտնել մահացած նախնիների մասին տեղեկությունները և նրանց համար իրականացնել տաճարային ծեսեր, նրանց ընտանեկան վեհացմանը նախապատրաստելու համար:

Այս ուղեցույցը կարող է օգնել ճյուղի ղեկավարներին, անհատներին և ընտանիքներին՝ սովորելու ապրել Սուրբ Հոգու ազդեցության ներքո, որպեսզի Եկեղեցու իրենց կոչումների կատարումը դառնա արտոնություն և ուրախություն պատճառի նրանց: Բացի այս ուղեցույցից, օգտակար կլինեն նաև սուրբ գրությունները, *Քահանայության և Օժանդակ Կազմակերպությունների Ղեկավարների Ուղեցույցը* (31178 201), *Ընտանիքի Ուղեցույցը* (31180 201), Ուսուցանման Ուղեցույցը (34595 201), *Ավետարանի Սկզբունքները* (31110 201), *Ավետարանի Հիմունքները* (31129 201), *Տեղեկություններ Ծրագրի Վերաբերյալ Քահանայության և Օժանդակ Կազմակերպությունների Ղեկավարների Համար* (36363 201), ինչպես նաև Եկեղեցու մի շարք այլ գրականություն ևս:

Ճյուղի նախագահությունը

Ճյուղ ստեղծելիս, միսիայի կամ շրջանի նախագահը, միսիայի նախագահի հաստատմամբ և Տիրոջ կողմից ստացած ոգեշնչմամբ, կանչում և ձեռնադրում է Մելքիսեդեկյան քահանայություն կրող որևէ արժանի տղամարդու՝ ծառայելու որպես ճյուղի նախագահ: Միսիայի կամ շրջանի նախագահը շնորհում է նախագահության բանալիները ճյուղի նախագահին: Եթե չկա Մելքիսեդեկյան քահանայություն կրող որևէ արժանի տղամարդ, ապա արժանի որևէ քահանա կարող է կանչվել և ձեռնադրվել որպես ճյուղի նախագահ:

Եթե ճյուղում չկան Մելքիսեդեկյան քահանայություն կրող առնվազն երկու անդամ, ապա ճյուղի նախագահը հոգ է տանում և ամրացնում անդամներին, հաճախ այցելում նրանց տները որպես տնային ուսուցիչ, վարում հաղորդության ժողովները, ղեկավարում ճյուղի միջոցառումները և պատրաստում հաշվետվությունները: Երբ ճյուղում մեծանում է քահանայություն կրող անդամների քանակը, միսիայի նախագահը, Տիրոջ Հոգու առաջնորդությամբ ճյուղի նախագահի համար կանչում է երկու խորհրդական և գործավար, որը կօգնի կատարել ճյուղի գրառումները: Նախագահը և նրա երկու խորհրդականները կազմում են ճյուղի նախագահությունը:

Ճյուղի նախագահը ճյուղի հովիվն է, որը սիրով և բարությամբ նախագահում է ճյուղի անդամներին: Նա օրինակ է ծառայում, որպես զոհողություն Տիրոջն առաջարկելով «կոտրված սիրտը և ապաշխարող հոգին» (3 Նեփի 9.20) և վկայելով Տեր Հիսուս Քրիստոսի աստվածային էության մասին: Ճյուղում ճյուղի նախագահը.

- Քահանայության նախագահող ղեկավարն է:
- Ընդհանուր դատավորն է:
- Ղեկավարում է աղքատներին և կարիքավորներին օգնելու հետ կապված աշխատանքները:
- Պատասխանատու է ճյուղի ֆինանսական գործերի և գրառումների համար:

Ճյուղի նախագահության անդամները հոգ են տանում և ամրացնում ճյուղի անդամներին, վարում են քահանայության ժողովների բացող մասը, նախագահում են Ահարոնյան քահանայությունը և վարում են հաղորդության ժողովները:

Քահանայության Նախագահող Ղեկավարը

Որպես քահանայության նախագահող ղեկավար ճյուղի նախագահին տրվել են նախագահության բանալիներ՝ կատարելու ճյուղում Տիրոջ աշխատանքը: Նա նախագահում է, հոգ է տանում ճյուղի անդամների մասին և ամրացնում նրանց, սովորեցնում է նրանց պատասխանատու լինել իրենց կոչումների համար: Երբ ճյուղի անդամների թիվն աճում է, նրան սկսում են օգնել ճյուղի նախագահության խորհրդականները, քահանայության քվորումներիի ղեկավարները և տնային ուսուցիչները: Նա խրախուսում է երեցների քվորումի նախագահին հետևել, որպեսզի տնային ուսուցիչներ նշանակվեն և կանոնավոր կերպով այցելեն յուրաքանչյուր տուն: Երեցների քվորումի նախագահի կողմից ստացված տնային ուսուցիչների պարբերաբար զեկույցներն օգնում են ճյուղի նախագահին տեղյակ լինել անդամների կարիքների մասին:

Ճյուղի նախագահը հոգ է տանում ճյուղի քվորումների, օժանդակ կազմակերպությունների և միջոցառումների համար, հատուկ ուշադրություն հատկացնելով Ահարոնյան Քահանայության՝ երիտասարդ տղամարդկանց և նույն տարիքի երիտասարդ կանանց: Նա հանդիսանում է Ահարոնյան քահանայության նախագահը: Հոգ տանելով ճյուղի 12 – 18 տարեկան երիտասարդ տղամարդկանց և կանանց մասին, նա պարբերաբար հարցազրույցներ է անցկացնում՝ օգնելու նրանց սովորել ավետարանի սկզբունքները, ապրելու դրանց համաձայն, և պատրաստվելու ապագա կյանքի համար: Նա շեշտում է լիաժամկետ միսիայի և միսիային նախապատրաստվելու կարևորությունը երիտասարդ տղամարդկանց և հետաքրքրված երիտասարդ կանանց համար: Նա երիտասարդ տղամարդկանց կանչում է ղեկավարելու Ահարոնյան Քահանայության քվորումները: Նա անդամներին կանչում է նաև ղեկավարելու ճյուղի օժանդակ կազմակերպություններում (Սփոփող Միություն, Երիտասարդ Տղամարդկանց Միություն, Երիտասարդ Կանանց Միություն,

Երեխաների Խումբ և Կիրակնօրյա Դպրոց): (Տես *Քահանայության և Օժանդակ Կազմակերպությունների Ղեկավարների Ձեռնարկը* օժանդակ կազմակերպությունների վերաբերյալ ավելի մանրամասն տեղեկություն ստանալու համար:) Իր խորհրդականների օգնությամբ, նա անդամներին կանչում է ուսուցանելու դասերը և ծառայելու ճյուղի այլ կոչումներում ևս: Նա պարբերաբար հարցազրույցներ է անցկացնում քվորումների և օժանդակ կազմակերպությունների ղեկավարների հետ՝ նրանց ծառայությունների մասին տեղեկանալու և նրանց հետ խորհրդակցելու համար:

Ճյուղի նախագահը նախագահում է հաղորդության, քահանայության և ճյուղի այլ ժողովները, եթե այդ ժողովներին ներկա չեն գտնվում շրջանի կամ միսիայի նախագահության որևէ անդամ, Տարածքային Յոթանասունականներից կամ Գերագույն Իշխանություններից որևէ մեկը: Ճյուղի նախագահը այցելող նախագահող իշխանություններին հրավիրում է նստել բեմում: Նա ջանքեր է գործադրում, որպեսզի բոլոր ժողովները և միջոցառումները օգնեն անդամներին գալ դեպի Քրիստոսը:

Ճյուղի նախագահը ղեկավարում է հիմնական ծեսերի կատարման արարողությունները (տես *Ընտանիքի Ուղեցույց*): Նա հետևում է, որպեսզի ծեսն իրականացնող յուրաքանչյուր անձ օժտված լինի անհրաժեշտ քահանության իշխանությամբ, լինի արժանի և հետևի ճիշտ կարգին: Նա հաստատում է Ահարոնյան քահանայության պաշտոններին կարգումը և այդ պաշտոններում առաջադիմությունները: Շրջանի և միսիայի նախագահի հավանությամբ, նա երաշխավորում է եղբայրներին ստանալու Մելքիսեդեկյան Քահանայություն և կարգվելու երեցի աստիճանի: Միսիայի նախագահի հաստատմամբ, շրջանի նախագահը, ճյուղի նախագահը կամ Մելքիսեդեկյան Քահանայություն կրող արժանի որևէ այլ անդամ, կարող է շնորհել Մելքիսեդեկյան Քհանայություն և ձեռնադրել երեցների:

Ընդհանուր դատավոր

Ճյուղի նախագահը, ճյուղի անդամների համար, ընդհանուր դատավոր է: Նա անդամների հետ հարցազրույցներ է անցկացնում դատելու համար, արդյոք նրանք արժանի են ստանալու տաճարի երաշխավորագիր, պաշտոններ, ծեսեր, կոչումներ կամ հայրապետական օրհնությունները: Նա կարող է խորհուրդ տալ հոգևոր առաջնորդության կարիք ունեցող իր անդամներին:

Որպես ընդհանուր դատավոր իր պարտականությունները կատարելու համար Տերը ճյուղի նախագահին խոսք է տալիս շնորհել հասկանալու պարգև: Եթե նա արժանի է այդ պարգևը ստանալուն, ապա դրա օգնությամբ կարող է տեսնել այն ամենը, ինչ կատարվում է անձի սրտում: Դա օգնում է նրան իմանալ, ինչ ասել, և ինչպես օգնել այդ մարդուն:

Երբ Եկեղեցու անդամները մեղք են գործում, ճյուղի նախագահը կարող է մխիթարել և օգնել նրանց ապաշխարել, խոստովանելով մեղքերը իրեն և Տիրոջը:

Եթե Եկեղեցու անդամը լուրջ մեղք է գործում, կարող է անհրաժեշտություն առաջանա կիրառել Եկեղեցու կարգապահական որևէ միջոց, ներառյալ՝ փորձաշրջան,

բանադրանք կամ հեռացում Եկեղեցուց: Ճյուղի նախագահը քննում է հարցը միսիայի նախագահի հետ, որը որոշում է կայացնում կարգապահական խորհրդի անհրաժեշտության մասին: Միսիայի նախագահի ղեկավարությամբ շրջանի կամ Մելքիսեդեկյան քահանայություն կրող ճյուղի նախագահը կարող է նախագահել կարգապահական խորհրդում: Այդ խորհուրդները պետք է անցկացվեն սիրո ոգու մթնոլորտում: Դրանք նախատեսված են օգնելու մեղսագործին ապաշխարել և կրկին վայելել ավետարանի բոլոր օրհնությունները:

Եթե ճյուղի նախագահը քահանա է, նա չունի ընդհանուր դատավոր լինելու իշխանություն: Այս դեպքում, միսիայի նախագահն է համարվում ճյուղի անդամների ընդհանուր դատավորը:

Հոգ տանել աղքատների և կարիքավորների համար

Ճյուղի նախագահն անդամներին սովորեցնում է ինքնուրույն ապահովել իրենց և ծոմապահության նվիրատվություններ կատարել՝ օգնելու կարիքի մեջ գտնվողներին: Նա սուրբ պարտականություն է կրում՝ գտնելու ճյուղի օգնությանն արժանի կարիքավորներին և ծոմի նվիրատվություններն օգտագործելով հոգալ նրանց կարիքները: Երեցների քվորումի նախագահը և Սփոփող Միության նախագահները կարող են օգնել նրան:

Հետևելով Եկեղեցու քաղաքականությանը ճյուղի նախագահը որոշում է, թե ինչպես պետք է օգտագործվեն ծոմի նվիրատվությունները կարիքավորներին և աղքատներին օգնելու համար:

Ֆինանսների և գրառումների վերահսկում

Ճյուղի նախագահը ստանում և հաշվարկում է ճյուղի անդամների տասանորդները և ծոմի նվիրատվությունները: Նա ղեկավարում է ճյուղի դրամական ֆոնդերի օգտագործումը, կատարում է տասանորդի տարեկան համաձայնեցումը և շրջանի կամ միսիայի նախագահի ղեկավարությամբ հետևում է, որպեսզի ճյուղի գրառումները և հաշվետվությունները լինեն ընթացիկ և համապատասխան Եկեղեցու քաղաքականությանը: Ոչ մի դեպքում ղեկավարը չի կարող օգտագործել Եկեղեցու ֆոնդերը անձնական շահերի համար:

Նա հետևում է, որպեսզի ճյուղում ծոմի ամսական նվիրատվությունները կազմակերպված ձևով հավաքվեն: Ծոմ պահելիս անդամները բաց են թողնում երկու կերակրաժամ և խնայած գումարը նվիրաբերում են որպես ծոմի նվիրատվություն:

Եթե ճյուղի նախագահը քահանա է, ապա միսիայի նախագահը վերահսկում է ճյուղի նվիրատվությունները և ծախսերը:

Երբ պայմանները թույլ են տալիս, ճյուղի նախագահը պետք է կանչի և վերապատրաստի մի գործավարի, որը քահանայություն է կրում, վճարում է լրիվ տասանորդ, ավետարանի մասին ամուր վկայություն ունի և պատրաստակամություն է ցուցաբերում հնազանդվել Տիրոջ պատվիրաններին: Ճյուղի նախագահը հետևում է, որպեսզի գործավարը Եկեղեցու ֆոնդերն օգտագործելիս գործի համաձայն Եկեղեցու քաղաքականությանը:

Հարցազրույց

Հարցազրույցը հանդիպում է ղեկավարի և մեկ այլ անձի միջև: Հարցազրույցի ժամանակ ղեկավարը հարցեր է տալիս, լսում , սովորեցնում և խորհուրդ տալիս: Հարցազրույցները հնարավորություն են տալիս կիսվել տեղեկություններով կամ զեկուցել կատարված առաջադրանքի կամ ծառայության մասին: Դրանք նաև հնարավորություն են տալիս հրահանգներ և խորհուրդներ տալ: Հարցազրույցը ղեկավարի համար լավ պահ է անդամներին Եկեղեցու վարդապետությունները, սկզբունքները և գործունեությունը բացատրելու համար, հիմնվելով սուրբ գրությունների և վերջին օրերի մարգարեների ուսմունքների վրա:

Ճյուղի նախագահը հարցազրույց է անցկացնում ութ տարեկան տարիքին մոտեցող երեխաների հետ, որոշելու, արդյոք նրանք պատրաստ են մկրտվելու և հաստատվելու որպես Եկեղեցու անդամներ, եթե նրանց ծնողներից առնվազն մեկը Եկեղեցու անդամ է և երկու ծնողները մկրտությանը դեմ չեն: (Միսիոներական ղեկավարները հարցազրույց են անցկացնում մկրտության թեկնածուների հետ, որոնք ինը տարեկան կամ ավելի մեծ են, և այն ութ տարեկան երեխաների հետ, որոնց ծնողներն անդամներ չեն: Նրանք որոշում են, արդյոք թեկնածուները արժանի են մկրտությանը և հաստատմանը:) Ճյուղի նախագահը հարցազրույց է անցկացնում ճյուղի անդամների հետ որոշելու, արդյոք նրանք արժանի են քահանայություն ստանալ, քահանայության ավելի առաջատար կոչում կամ Եկեղեցու այլ կոչում ստանալ: Ճյուղի նախագահը և միսիայի նախագահը հարցազրույց են անցկացնում ճյուղի անդամների հետ որոշելու, արդյոք

անդամները արժանի են ստանալու տաճարի երաշխավորագիր:

Հետևյալ առաջարկությունները կօգնեն ղեկավարներին հարցազրույցներն ավելի օգտակար և արդյունավետ դարձնել:

1. Ընտրեք հանգիստ տեղ, որտեղ ձեզ չեն խանգարի:
2. Անձին տեղեկացրեք հարցազրույցի նպատակի մասին:
3. Հարցերը տվեք սիրով և ուղղակիորեն:
4. Անձին հարցեր տալու և իր զգացմունքները արտահայտելու հնարավորություն տվեք:
5. Լսեք նրան:
6. Հստակ խորհուրդներ, հրահանգներ և հանձնարարություններ տվեք:
7. Շնորհակալություն հայտնեք և խրախուսեք նրան, Սուրբ Հոգու ազդեցությամբ, բերեք ձեր վկայությունը, կարդացեք հատվածներ սուրբ գրություններից և միասին աղոթեք: Օգնեք նրան հեռանալ ուժի և հույսի զգացումով:
8. Բավական ժամանակ տրամադրեք հարցազրույցին, որպեսզի անձը չունենա շտապողության զգացում:

Կնոջ հետ հարցազրույց անցկացնելիս ճյուղի նախագահը, հնարավորության դեպքում, պետք է խնդրի քահանայություն կրող որևէ տղամարդու ներկա լինել հարակից սենյակում, դահլիճում կամ նախասրահում:

Կանչել անդամներին ծառայել Եկեղեցու պաշտոններում

Անդամներին Եկեղեցու ծառայության կանչելիս քահանայության ղեկավարները պետք է յուրաքանչյուր անձի հետ առանձին հարցազրույցներ անցկացնեն, որոշելու, արդյոք անձը արժանի է ծառայելու, արդյոք նա ունի կարողություն, ցանկություն և ժամանակ կատարելու այդ կոչման աշխատանքը, արդյոք նրա ընտանեկան վիճակը թույլ կտա նրան կատարելու իր ծառայությունը:

Եթե ոգեշնչման միջոցով ղեկավարը զգում է, որ տվյալ պաշտոնը համապատասխանում է անձին, ապա նա խնդրում է նրան ընդունել կոչումը, պարզաբանելով, որ այն գալիս է Տիրոջից: Նա պարզ եղանակով բացատրում է կոչման պարտականությունները և օրհնությունները և տեղեկացնում, որ որոշակի ժամանակ հետո նա կարող է ազատվել իր ծառայությունից:

Ամուսնացած կնոջը կոչում տալուց առաջ ղեկավարը պետք է համաձայնեցնի դա կնոջ ամուսնու հետ և հավաստիանա, որ ամուսինը կաջակցի կնոջը: Տղամարդուն կոչում տալուց առաջ ղեկավարը պետք է հավաստիանա, որ կինը կաջակցի նրան: Ղեկավարը պետք է համաձայնեցնի ծնողների հետ, եթե Եկեղեցում կոչում է տալիս երեխայի կամ երիտասարդի:

Աջակցում և ազատում

Երբ անդամները ընդունում են կոչումը կամ պատրաստվում են ձեռնադրվել Ահարոնյան Քահանայության որևէ պաշտոնի, ճյուղի նախագահության անդամը Եկեղեցու ժողովին խնդրում է անդամներին ցույց տալ իրենց աջակցությունը; Նախագահող կամ ժողովը վարող անձը ներկայացնում է անունները (հաղորդության ժողովին ճյուղի կոչումների համար, կամ դասարանում, կամ քվորումում դասարանի կամ քվորումի պաշտոնների համար) և նոր կանչված անդամներին խնդրում է կանգնել, մինչ հավաքվածները, դասարանը կամ քվորումը կարտահայտեն իրենց աջակցությունը: Կանչվող անդամների անունները ներկայացնող անձը պետք է հայտարարի.

«Մենք կանչել ենք [հայտարարում է անձի անունը] ծառայելու որպես [հայտարարում է պաշտոնը, որին կանչվել է այդ անձը] և առաջարկում ենք աջակցել նրանց այդ կոչման մեջ: Ովքեր կողմ են, թող բարձրացնեն իրենց ձեռքը: [Սպասեք, որպեսզի նրանք, ովքեր կողմ են, բարձրացնեն իրենց ձեռքերը:] Ովքեր դեմ են, կարող են բարձրացնել իրենց ձեռքերը: [Մի փոքր սպասեք, որպեսզի նրանք, ովքեր դեմ են, բարձրացնեն իրենց ձեռքերը:]»:

Ճյուղի նախագահության անդամը կարող է առանձին հանդիպել նրանց հետ, ովքեր դեմ են: Անդամները, որոնց աջակցում են, պետք է նույնպես բարձրացնեն իրենց ձեռքերը որպես աջակցման նշան: Եթե երկու կամ ավելի անդամների անուններ են ներկայացվում, ապա նրանց կարող են աջակցել որպես խմբի:

Եկեղեցու պաշտոններից անդամներին ազատելուց քահանայության ղեկավարը հարցազրույց է անցկացնում նրանց հետ, անկեղծ շնորհակալություն է հայտնում ծառայության համար և բացատրում, որ եկել է ազատվելու ժամանակը: Հաղորդության ժողովի ժամանակ նախագահող կամ ժողովը վարող անձը հայտարարում է նրանց անունները, ովքեր ազատվում են ճյուղի ծառայություններից: Երբ անդամներն ազատվում են դասարանի կամ քվորումի պաշտոներից նախագահողը կամ վարողը հայտարարում է ազատումը դասարանի կամ քվորումի ժողովի ժամանակ: Հայտարարելով ազատման մասին ղեկավարները անդամներին խնդրում են արտահայտել իրենց երախտագիտությունը ծառայության համար, բարձրացնելով ձեռքը ծառայությունից ազատվող յուրաքանչյուր անդամի համար:

Անդամների ձեռնադրումը կոչումների



Անդամները, որոնք կանչվում են Եկեղեցու պաշտոնների, պետք է ձեռնադրվեն իրենց ծառայությունը սկսելուց առաջ (տես ՎԼՈ 42.11): Նախագահող իշխանության ղեկավարությամբ Մելքիսեդեկյան Քահանայություն կրող մեկ կամ ավելի տղամարդիկ, ներառյալ՝ արժանի հայրը կամ ամուսինը, կարող են մասնակցել ձեռնադրմանը: Նրանք թեթևակի դնում են ձեռքերը անձի գլխին: Խոսողը.

1. Արտասանում է անձի լրիվ անունը:
2. Հայտարարում է, որ ձեռնադրում է անձին Մելքիսեդեկյան Քահանայության իշխանությամբ:
3. Ձեռնադրում է անձին այն կոչմանը, որին նա կանչվել է:
4. Տալիս է օրհնություն Հոգու հուշումով:
5. Ավարտում է Հիսուս Քրիստոսի անունով:

Երեցների, ուսուցիչների կամ սարկավագների քվորումի նախագահներին ձեռնադրելուց միսիայի կամ ճյուղի նախագահը շնորհում է այդ քվորումի նախագահության բանալիները ձեռնադրվողին:

Ծեսեր և օրհնություններ

Քահանայության ծեսերը սրբազան գործողություններ են, որոնք հայտնի են դարձվում Տիրոջ կողմից և կատարվում քահանայության իշխանությամբ: Քահանայության օրհնությունները տրվում են բուժելու, մխիթարելու և քաջալերելու համար: Ծեսեր կատարող և օրհնություններ տվող եղբայրները պետք էպատրաստեն իրենց, ապրելով ավետարանի սկզբունքներով և աշխատելով առաջնորդվել Սուրբ Հոգով: Յանկացած ծես կամ օրհնություն նրանք կատարում են աստվածային ձևով: Յուրաքանչյուր ծես պետքէ կատարվի.

1. Հիսուս Քրիստոսի անունով:

2. Քահանայության իշխանությամբ:

3. Անհրաժեշտ եղանակով, օրինակ՝ հատուկ խոսքերով կամ սրբագործված յուղով:

4. Եթե անհրաժեշտ է, ծեսերը պետք է լիազորվեն ճիշտ բանալիները կրող հատուկ նշանակված քահանայության ղեկավարի կողմից: *Քահանայության ղեկավարի լիազորությունը պահանջող ծեսերից են՝ երեխաներին անվան պարգևումը և օրհնումը, մկրտությունը և հաստատումը, քահանայության ձեռնադրումը և քահանայության պաշտոնի կարգումը, օրհնությունը և հաղորդության բաժանումը, գերեզմանների օծումը:*

Հատուկ ծեսերի և օրհնությունների հրահանգների համար տես *Ընտանիքի Ուղեցույց*:

Անդամի պարտականությունները

Եկեղեցու ղեկավարները Եկեղեցու բոլոր անդամներին, անկախ նրանց ապրելու վայրից, հրավիրում են աջակցել Եկեղեցու առաքելությանը՝ իրենց հիմնական պարտականությունները կատարելու միջոցով, ներառյալ՝ (1) քարոզել ավետարանը, բերելով վկայություն Սուրբ Հոգու հուշումով, (2) օգնել անհատներին և ընտանիքներին կատարելագործվել անմահություն և հավերժական կյանք տանող իրենց ճանապարհորդության ժամանակ, աշխատելով պահել պատվիրանները, ծառայել իրենց մերձավորներին և ստանալ ավետարանի օրհնությունները և ուխտերը, և (3) օգնել անհատներին և ընտանիքներին գտնել իրենց մահացած նախնիներին, խրախուսել նրանց ստանալ տաճարի օրհնությունները: Եկեղեցու բոլոր անդամներն աջակցում են Եկեղեցու առաքելությանը, կատարելով այս պարտականությունները: Այս պարտականությունների վերաբերյալ ավելի մանրամասն տեղեկությունների համար տես *Ընտանիքի Ուղեցույց:*

Ժողովներ

Այն ճյուղերում, որտեղ ճյուղի նախագահը Մելքիսեդեկյան Քահանայության միակ կրողն է կամ Ահարոնյան քահանայության քահանա է, անց են կացվում հաղորդության ժողով և ավետարանի հրահանգների Կիրակնօրյա ժողով:

Երեցների կազմակերպված քվորում ունեցող ճյուղերում ի լրումն վերը նշված ժողովների անց են կացվում հետևյալ ժողովները.

1. Քահանայության ժողով
2. Կիրակնօրյա ժողով կանանց, երիտասարդ կանանց և երեխաների համար
3. Քահանայության գործադիր կոմիտեի ժողով
4. Ճյուղի խորհրդի ժողով

Եթե անդամների և ղեկավարների, ինչպես նաև սենյակների թիվը բավականացնում է, ապա ճյուղը կարող է դադարեցնել կանանց, երիտասարդ կանանց և երեխաների ժողովը և ի լրումն վերը նշված ժողովների անց կացնել հետևյալ ժողովները.

1. Սփոփող Միություն
2. Ահարոնյան Քահանայություն (Երիտասարդ Տղամարդիկ)
3. Երեխաների Խումբ
4. Կիրակնօրյա Դպրոց
5. Երտասարդ Կանայք
6. Միացյալ, երբ Ահարոնյան Քահանայության երիատասարդ տղամարդիկ և նույն տարիքի Երիատսարդ Կանայք

հանդիպում են առանձին կամ միասին շաբաթվա մոյս երեկոներին կամ Շաբաթ օրը միջոցառումներ անցկացնելու համար: Դա պետք է արվի ճյուղի նախագահի ղեկավարության և վերահսկողության ներքո:

Կիրակնօրյա Ժողովների տարբերակներ

Տեղեկություններ Ծրագրի Վերաբերյալ Քահանայության և Օժանդակ Կազմակերպությունների Ղեկավարների Համար –ը տալիս է Կիրակնօրյա ժողովների հետևյալ տարբերակները.

Ընտանեկան երեկո

Յուրաքանչյուր ընտանիք շաբաթվա ընթացքում առնվազն մեկ անգամ իր տանը անց է կացնում ընտանեկան երեկո (տես *Ընտանիքի Ուղեցույց*):

Հաղորդության Ժողով

Ճյուղի նախագահը նախագահում է հաղորդության ժողովին, որի ժամանակ համապատասխան քահանայություն կրող արժանի եղբայրներն օրհնում և բաժանում են հաղորդությունը: Ճյուղի նախագահության անդամը վարում է ժողովը և հետևում է, որպեսզի այն ժամանակին սկսվի: Ստորև տրվում է օրակարգի օրինակը.

1. Ողջույնի խոսք և հոգևոր մթնոլորտի հաստատում
2. Կարճ հայտարարություններ
3. Բացիչ հիմն և աղոթք
4. Ճյուղի գործերը
5. Հաղորդության հիմն և հաղորդության ծառայություն
6. Ելույթներ ավետարանային թեմաներով, հիմնված սուրբ գրությունների և վերջին օրերի առաքյալների և մարգարեների ուսմունքների վրա
7. Ելույթների միջև համայնքի կամ ճյուղի երգչախմբի երաժշտական համար, սովորաբար որևէ հիմն հիմների գրքից (ըստ ցանկության)
8. Փակիչ հիմն և աղոթք

Ամիսը մեկ անգամ, սովորաբար ամսվա առաջին Կիրակի օրը, հաղորդության ժողովը նաև ծոմի և վկայությունների ժողով է դառնում: Այդ օրը անդամներից ակնկալվում են ներկա գտնվել ծոմի և աղոթքի ոգով: Նրանք, ում առողջությունը թույլ է տալիս, բաց են թողնում երկու կերակրաժամ, ոչինչ չուտելով և չխմելով այդ ընթացքում:

Նրանից հետո, երբ հաղորդությունն օրհնվում և բաժանվում է, ծոմի և վկայությունների ժողովը վարող ճյուղի նախագահության անդամը բերում է իր վկայությունը Հիսուս Քրիստոսի և ավետարանի մասին, այնուհետև հրավիրում է անդամներին ժողովի մնացած ժամանակի ընթացքում բերել իրենց վկայությունները: Ժողովն ավարտվում է հիմնով և աղոթքով: Հաղորդությունն օրհնվում և բաժանվում է հաղորդության ամեն ժողովին (տե՛ս սույն ուղեցույցի «Ծեսեր և Օրհնություններ» բաժինը):

Քահանայության Ժողով

Քահանայության ժողովն անց է կացվում հաղորդության ժողովից առաջ կամ հետո: Ճյուղի նախագահության անդամը վարում է բացող մասը: Ստորև տրվում է օրակարգի օրինակը.

1. Ողջույնի խոսք և հոգևոր մթնոլորտի հաստատում
2. Կարճ հայտարարություններ և գործեր
3. Բացիչ հիմն և աղոթք
4. Բաժանում քվորումների գործերը քննարկելու և հրահանգներ ստանալու համար
5. Փակիչ աղոթք քվուրումներում

Բացող մասից հետո բոլոր չափահաս տղամարդիկ (19 տարեկան և բարձր) հանդիպում են երեցների քվորումի ժողովին, ուր նախագահում է երեցների քվորումի նախագահը:

Բոլոր երիտասարդ տղամարդիկ (12-18 տարեկան) հանդիպում են Ահարոնյան Քհանայության քվորումի ժողովին, ուր նախագահում է ճյուղի նախագահը: Եթե սենյակների թիվը սահմանափակ է և անդամների թիվը անբավարար, Ահարոնյան Քահանայության երիտասարդ տղամարդիկ հանդիպում են Մելքիսեդեկյան Քահանայության եղբայրների հետ: Սակայն, եթե երիտասարդ տղամարդկանց և ղեկավարների թիվը, ինչպես նաև սենյակների քանակը բավարար է, ապա սարկավագները, ուսուցիչները և քահանաները հանդիպում են առանձին քվորումներում: (Տես *Քահանայության և Օժանդակ Կազմակերպությունների Ղեկավարների Ուղեցույց:*)

Կանանց, Երիտասարդ Կանանց և Երեխաների Կիրակնօրյա ժողովները

Փոքր ճյուղերում, որտեղ քույրերի և երեխաների թիվը փոքր է օժանդակ կազմակերպությունների առանձին ժողովներ անցկացնելու համար, Սփոփող Միության նախագահը վարում է բացող մասը: Ժողովի օրակարգն է.

1. Ողջույնի խոսք և հոգևոր մթնոլորտի հաստատում
2. Կարճ հայտարարություններ և գործեր
3. Բացիչ հիմն և աղոթք
4. Հիմներ և երեխաների երգեր
5. Հրահանգներ Սփոփող Միության նախագահից կամ բաժանում դասարանների
6. Փակիչ աղոթք

Եթե փոքր ճյուղերում առանձին բացիչ մասերի համար տարածությունը չի բավականացնում, ապա տղամարդիկ, կանայք և երեխաները հանդիպում են միասին միացյալ բացիչ մաս անցկացնելու համար, որը վարում է ճյուղի նախագահը:

Երբ ճյուղը մեծանում է, երիտասարդ կանայք (12-18 տարեկան) կարող են հավաքվել Սփոփող Միության և Երեխաների հետ (3-11 տարեկան) ճյուղի նախագահի կողմից նշանակված քրոջ ղեկավարության ներքո:

Երբ ճյուղում կազմակերպված են Սփոփող Միությունը, Երիտասարդ Կանանց Միությունը, Երեխաների Խումբը և Կիրակնօրյա Դպրոցը, ապա Սփոփող Միությունը և Երիտասարդ Կանայք հավաքվում են առանձին այն ժամանակ, երբ անց է կացվում քահանայության ժողովը: Կիրակնօրյա Դպրոցը հավաքվում է քահանայության ժողովից հետո: Երեխաների Խումբը անց է կացվում այն նույն ժամանակ, երբ անց են կացվում քահանայության, Սփոփող Միության, Երիտասարց Կանանց Միության ժողովները և Կիրակնօրյա Դպրոցը: Երեխաների Խմբի բացիչ մասը և միացյալ ժամն անց են կացվում առաջին կեսի ժամանակ, դասը վարվում է երկրորդ կեսի ժամանակ: Օժանդակ կազմակերպությունների ժողովներին անդամներն աղոթում են, հիմներ են երգում, սովորեցնում և սովորում են ավետարանը, օգտվելով Տեղեկություններ Ծրագրի Վերաբերյալ Քահանայության և Օժանդակ Կազմակերպությունների Ղեկավարների Համար -ում նշված նյութերից:

Քահանայության Գործադիր Կոմիտեի Ժողով

Ճյուղի նախագահությունը, գործավարը, գործադիր քարտուղարը, երեցների քվորումի նախագահը, ճյուղի Երիտասարդ Տղամարդկանց նախագահը և ճյուղի միսիայի ղեկավարը (եթե կանչված է) կազմում են ճյուղի քահանայության գործադիր կոմիտեն: Այս կոմիտեն հանդիպում է ըստ անհրաժեշտության կոորդինացնելու ճյուղի միջոցառումները, ծրագրերը և ծառայությունները, որպեսզի ամրացնեն ընտանիքներին և անհատներին և բավարարեն անդամների կարիքները: Նախագահում է ճյուղի նախագահը: Կոմիտեն քննարկում է և կոորդինացնում է այնպիսի պարտականություններ, ինչպիսին են՝ տնային ուսուցումը, միսիոնե-

ական աշխատանքը, տաճարային աշխատանքը և ընտանիքի պատմության աշխատանքը:

Ճյուղի Խորհրդի Ժողով

Ճյուղի նախագահությունը, գործավարը, գործադիր քարտուղարը, երեցների քվորումի նախագահը, ճյուղի Երիտասարդ Տղամարդկանց նախագահը և ճյուղի միսիայի ղեկավարը (եթե կանչվում է), Սփոփող Միության, Երիտասարդ Կանանց Միության, Երեխաների Խմբի և Կիրակնօրյա Դպրոցի նախագահները և ճյուղի ուսուցիչների կատարելագործման կոորդինատորը հավաքվում են ճյուղի խորհրդի ժողովին: Այդ ժողովների ժամանակ ճյուղի խորհուրդը եղանակներ է փնտրում հոգեպես ամրացնելու անհատներին և ընտանիքներին, օգնելու նրանց ստանալ տաճարային օրհնությունները, ամրացնելու նորադարձներին, սովորեցնելու աղքատներին օգնելու սկզբունքները, համաձայնեցնելու ճյուղի ծրագրերը, միջոցառումները և ծառայությունները, լուծելու ճյուղի խնդիրները: Եթե ճյուղում կանչված չեն Երիտասարդ Կանանց և Երեխաների Խմբի նախագահներ, ապա Սփոփող Միության նախագահը քննարկում է ճյուղի կանանց, երիտասարդ կանանց և երեխաների կարիքները: Ճյուղի նախագահը խրախուսում է մտքերը և առաջարկությունները և օգնում է բոլորին ակտիվորեն մասնակցել քննարկումներին, որոշումների ընդունմանը և ծրագրերի մշակմանը: Նա հաշվի է առնում նրանց առաջարկությունները ծրագրեր կազմելիս և առաջադրանքներ հանձնարարելիս:

Հանդիպման վայրեր

Ընտանեկան երեկոները անց են կացվում անդամների տներում: Ճյուղի բոլոր այլ ժողովները անց են կացվում որևէ տանը, վարձակալված շենքում կամ Եկեղեցու սեփականությունը համարվող շենքում: Միսիայի նախագահը կարող է տեղեկություններ տրամադրել ճյուղի համար ժողովների վայր ձեռք բերելու և այն պահպանելու վերաբերյալ: Այս ղեկավարները կարող են նաև տեղեկություն տալ հավաքատեղի վարձակալման կամ Եկեղեցու սեփական շենքի կառուցման վերաբերյալ:

Նյութեր

Եկեղեցին հրատարակում է նյութեր, որոնք օգնում են անդամներին սովորել Հիսուս Քրիստոսի ավետարանը և ապրել համաձայն դրան: Այդ նյութերն ընդգրկում են սուրբ գրությունները, դասեր պարունակող ձեռնարկները, *Լիահոնան*, ավետարանի արվեստը և ուղեցույցները: Եկեղեցու նյութերը հիմնված են սուրբ գրությունների և վերջին օրերի մարգարեների խոսքերի վրա: Ճյուղի համար նախատեսված նյութերը պարունակում են հիմնական կամ ընդհանուր ծրագրի նյութերը (տես *Տեղեկություններ Ծրագրի Վերաբերյալ Քահանայության և օժանդակ Կազմակերպությունների Համար*): Եթե *Լիահոնան* մատչելի է, ճյուղի բոլոր ընտանիքները պետք է բաժանորդագրվեն:

Ամեն տարի տարածքային գրասենյակը կամ բաշխման կենտրոնը ճյուղ է ուղարկում ձեռնարկներ կամ այլ նյութեր, և տեղեկությունը լրացուցիչ օրինակներ կամ հաստատված այլ նյութեր պատվիրելու վերաբերյալ:

Ճյուղի ղեկավարները նյութերը պետք է պահեն այն շենքում, որտեղ անց են կացվում ճյուղի ժողովները, կամ անդամների տներում: Ղեկավարները պետք է տեղեկացնեն անդամներին նյութերի առկայության մասին և պետք է խրախուսեն նրանց օգտվել դրանցից դասերը և ելույթները պատրաստելու կամ անձնական ուսուցման համար: Ուսուցիչները կարող են ստանալ դասարանների կամ քվորումների ձեռնարկները, սակայն ուսուցչի ծառայությունից ազատվելու դեպքում նրանք պետք է վերադարձնեն դրանք ճյուղին կամ ծխին:

Միջոցառումներ

Ճյուղի ղեկավարների վերահսկողությամբ ճյուղը պլանավորում և անց է կացնում միջոցառումներ, որոնք համապատասխանում են անդամների կարիքներին: Սակայն, ճյուղի միջոցառումները չպետք է մրցակցության մեջ մտնեն ընտանեկան միջոցառումների հետ կամ խանգարեն ընտանեկան կյանքին: Բոլոր միջոցառումները պետք է քիչ ծախսեր պահանջեն, որպեսզի հնարավոր լինի ընդգրկել բոլորին: Ծախսերը նախապես պետք է հաստատվեն ճյուղի նախագահության կողմից: Կիրակի օրվա համար պլանավորված միջոցառումները պետք է պատշաճ լինեն Հանգստի օրվա համար: Ոչ մի միջոցառում չպետք է պլանավորվի Երկուշաբթի երեկոյան, քանի որ այդ օրը հատկացված է ընտանեկան երեկո անցկացնելու համար:

Երաժշտություն

Եկեղեցու Հիմները և համապատասխան երաժշտությունը կարևոր են Եկեղեցու ժողովների ժամանակ, անդամների տներում և անձնական կյանքում: Պատշաճ երաժշտություն կարելի է գտնել *Ավետարանի Սկզբունքներում*, *Երեխաների Երգահանում* և *Հիմներ և Երեխաների Երգեր*-ում, որոնք թարգմանված են տարբեր լեզուներով: Երաժշտական վերապատրաստում, ինչպես նաև գործիքներ, կարող են տրամադրվել նրանց ովքեր երաժշտության բնագավառում ծառայություն են կրում կամ ովքեր պատրաստվում են ծառայել ապագայում:

Գրառումներ և հաշվետվություններ

Տերն Եկեղեցուն պատվիրել է գրառումներ կատարել: Չորս տեսակի գրառումներ են կատարվում, որոնք օգնում են ղեկավարներին աջակցել անդամներին, և, որոնց համար տրամադրվում են ձևեր:

- Ֆինանսական գրառումները (անդամների ներդրումները և ամսական ֆինանանսական հաշվետվությունը):
- Անդամների առաջադիմության հաշվետվությունները (անդամների հաճախելիությունը և նորադարձների քահանայության պաշտոնները):
- Անդամության գրառումները (անդամների մասին տեղեկությունը, ներառյալ ծեսերը):
- Պատմական գրառումները (կոչումներ ստացողների աջակցումը և միջոցառումների գրառումները):

Այս գրառումները վարելիս և հաշվետվությունները պատրաստելիս, ճյուղի նախագահը պետք է հետևի միսիայի նախագահի հրահանգներին: Նա կարող է ճյուղի գործավար կանչել, որը կօգնի վարել գրառումները:

Միսիայի նախագահի ղեկավարությամբ ճյուղի ղեկավարները սովորում են գրառումներ վարելու և հաշվետվություններ կազմելու կարևորության մասին և պետք է գրի առնեն ճյուղի կամ ծխի կարևոր իրադարձությունները: Եկեղեցու գաղտնի տեղեկությունը պետք է զգուշորեն պահվի այդ սուրբ գրառումները վարող անձանց կողմից:

Ֆինանսներ

Տերը Եկեղեցու յուրաքանչյուր անդամի հնարավորություն է տալիս ստանալ հարուստ օրհնություններ, վճարելով տասանորդը և ծոմի և այլ նվիրատվությունները: Անդամները վճարում են իրենց եկամտի մեկ տասներորդ մասը՝ որպես տասանորդ: Բացի դա նրանք ամեն ամսվա առաջին կիրակի օրը ծոմ են պահում, բաց թողնելով երկու կերակրաժամ, նվիրաբերում են այդ բաց թողնված ուտելիքին համարժեք դրամը Եկեղեցուն ճյուղի աղքատներին և կարիքավորներին օգնելու համար: Անդամները նաև կարող են ներդրումներ կատարել Եկեղեցում միսիոներական ֆոնդին, տաճարների կառուցման և Եկեղեցու այլ աշխատանքների համար:

Հնարավորության դեպքում երկու եղբայրներ պետք է բացեն տասանորդի և այլ նվիրատվությունների ծրարները, լրացնեն ստացականները, և տնօրինեն գումարը միսիայի նախագահի ղեկավարությամբ:

Ղեկավարների վերապատրաստում

Միսիայի քահանայության ղեկավարները ճյուղի քահանայության ղեկավարներին սովորեցնում են ղեկավարել ճյուղը, կատարել իրենց հիմնական պարտականությունները և օգնել անդամներին օգտագործել քահանայությունն իրենց կյանքում: Միսիայի քահանայության ղեկավարները ուղղություն են տալիս նաև օժանդակ կազմակերպությունների ղեկավարներին իրենց պարտականությունները կատարելու համար:

Միսիայի քահանայության ղեկավարները հետևում են, որպեսզի յուրաքանչյուր ճյուղ ունենա անհրաժեշտ նյութերը որպես Եկեղեցու միավոր հաջող գործելու համար:

Ղեկավարման վերաբերյալ լրացուցիչ տեղեկության համար տե՛ս Քահանայության և Օժանդակ Կազմակերպությունների Ղեկավարների Ուղեցույց:

Եկեղեցու Նյութերի և Ընտանեկան Պատմության Տեղեկության Ձեռքբերում

Տեղական ղեկավարները և այլ անդամները կարող են ձեռք բերել Եկեղեցու նյութերը, ներառյալ սուրբ գրությունները, ուսուցման ծրագրերը, Եկեղեցու ամսագրերը, ներքնազեսգտներ, տաճարի զգեստներ, Եկեղեցու բաշխման կենտրոնից կամ ծառայության կենտրոնից, Սոլթ Լեյքի Բաշխման Կենտրոնից կամ Եկեղեցու Ինտերնատային պաշտոնական էջից. www.lds.org:

Ընտանեկան պատմության վերաբերյալ տեղեկություն կարելի է գտնել Եկեղեցու ընտանեկան պատմության Ինտերնետային էջից. www.familysearch.org:

ՀԻՍՈՒՍ
ՔՐԻՍՏՈՍԻ
ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԻ ՍՐԲԵՐԻ
ԵԿԵՂԵՑԻ

ARMENIAN
4 02311 79201 6
31179 201